

րանը և կուտէ շատ ու ամեն տեսակ այլանդակ բաղադրու-
թիւններէ պատրաստուած բաներ :

Կնոջ վաճառքը.— Աղքատ Քիւրդ կիները իրենց աղջիկ-
ները կը ծախեն շատ անգամ զանոնք սնուցանել չը կրնա-
լուն համար . Քիւրդիստանի մէջ անգամ մը պատահեցայ այս-
պիսի դէպքի մը , թիւրք պաշտօնակայ մը կրկու՝ ութէն տասը
տարեկան աղջիկները ծախու առաւ քսան հինգ արծաթ մէ-
ճիտի , գնողը կ'առարկէր որ անոնց գեղեցկութիւնը անգնա-
հատելի գտնելով , զանոնք պիտի կրթէ ու իր մօտիկ ազգա-
կաններուն կնութեան տայ :

Աւազակութեան բաժինը.— Հասարակ քիւրդը առտնձին
աւազակութիւն բնկու իրաւունք չունի . աւազակութիւնը
ցեղային հաւաքական գործ մ'է , որմէ ինքը շատ քիչ բաժին
ունի . մեծ մասը կը պատկանի ցեղապետին և Ցեղապետական
Համայնքի պէտքերու գործածութեանը . անհատական աւազա-
կութիւնը թոյլատրելի չէ . պատահած ժամանակ ցեղապետին
բողոքուած ատեն կը պատժուի , իսկ եթէ գողութիւնը մեծ և
արժէքտուր է , ձեռքէն կ'առնուի իրեն փոքրիկ պատառ մը
թողնելով . այս պարագային միայն կարելի պիտի լինի ներուիլ
և կամ փոքր պատիժ ստանալ :

Զուգորդութիւն բարբերու մեջ.— Քրդական բարբարո-
սութիւնները որոնք աւելի շատ յայտնի դարձան հայկական
կոտորածներու ժամանակ՝ չէին կարող անհաւասար կշիռ կազ-
մել տարբեր բարքերու ու հասկացողութիւններու հետ : Մարդ-
կային գործողութիւններու մէջ մի տեսակը առնչութիւն ունի
իր հոգեկան զրութեան ուրիշ կողմերու հետ , որոնք ցածրէն
մինչև բարձր՝ իրենց աստիճանացումների մէջ , ամբողջութեամբ
միշտ հաւասարակշռութիւն կը պահպանեն , իրենց տարբեր
տարբեր մասերով :
